ԲԱՆԱՁԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂՈՒՄ՝ ԱՐՑԱԽՈՒՄ, ՏԻՐՈՂ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի դեմոկրատական կուսակցության հյուսիս-արևմտյան բաժանմունքի ռեգիոնալ սահմանադիր կոնֆերանսը երկրի քաղաքական վիճակը գնահատում է բարդ իրադրության լուծման հույսով, որ կապված է իրենց ինքնորոշման և անկախության իրավունքն իրականացնող ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների հետ:

Սակայն իրական հաջողությունը հնարավոր է անկախության ձեռքբերման մի քանի հիմնադիր սկզբունքների պահպանման դեպքում՝ քաղաքական ախոյանների նկատմամբ բռնության չգործադրում, պարտնյորների հետ միասնություն դեմոկրատական բլոկում. փոխգործողություններ կայսրության մյուս մասերի դեմոկրատիայի, ռուսական դեմոկրատիայի հետ: Բալթիական երկրները մեզ արժեքավոր դաս են մատուցում, թե ինչպես խաղաղ և սահմանադրական անցում կատարել դեպի անկախ, քաղաքական և տնտեսական թելադրանքից ազատ պետականություն:

Դիմելով սլավոնական հանրապետությունների, Անդրկովկասի, Միջին Ասիայի, Մոլդովայի դեմոկրատական հասարակայնությանը, մենք հավաստիացնում ենք ժողովուրդներին և ժողովրդավարությամբ ընտրված նրանց ներկայացուցիչներին՝ խաղաղ ազատագրման մեր միասնությունը: Հուսով ենք, որ դեպի ազատություն տանող ճանապարհին դուք չեք նսեմացնի իր սուվերեն իրավունքների պաշտպանությունը, ձեզ վստահած ժողովրդի պատիվն ու արժանապատվությունը:

Առանձնահատուկ զգացմունքներ ենք տածում հայ ժողովրդի և նրա շարժման նկատմամբ: Այս օրերին, երբ Հայաստանի և Արցախի դեմոկրատիան գտնվում է ժողովրդապետության մարմինների ընտրության երրորդ, վճռական փուլի շեմին, հատկապես կարևոր է անկախ ընտրության, չբռնադատված և առանց զենքի կիրառման ընտրության ապահովումը:

Անտարակույս, ամեն բան չէ, որ կախված է մեզնից. երկրի և զինված ուժերի ղեկավարությունը զանգվածային տեղեկատվության միջոցներով բորբոքում է հերթական հակահայկական հիստերիան: Այդ գործիչների քրեական հստակորեն արտահայտեց գեներալ Մոկաչովը, ՌԽՖՍՀ կոմկուսի սահմանադիր համագումարում իր ունեցած ծրագրային ելույթում: Երկաթե դիկտատուրայի այս ջատագովը, որ հերթական կոչումը և Մերձվոլգյան-Ուրալյան զինվորական օկրուգը ստացավ Երևան քաղաքի «Զվարթնոց» օդանավակայանում (05. 07. 88 թ.) «փայլուն» գործողության համար, հարձակում խաղաղ ցուցարարների վրա, որի հետևանքով հազար մարդկային զոհեր, և, որը յուրօրինակ փորձախաղը հանդիսացավ 09. 04. 89 թ. Թբիլիսիում տեղի ունեցած ողբերգության, երբ զինծառայողների գործողությունները ղեկավարում էր նրա կոլեգա գեներալ Ռոդիոնովը, միանգամայն արժանի իր պետին, Յազովին, որը մարշալական ուսադիրներ ստացավ ԽՍՀՄ ժողովուրդների դեմ հաջող ռազմական գործողություններ վարելու համար:

Սակայն ռուս ժողովրդին խորթ է նման փառքը: Գիտենալով զինվորական գործի հիրավի արժեքը, նա արհամարհանքով է վերաբերվում երկրի քաղաքական ղեկավարության կողմից բանակի վզին փաթաթվող ֆանդարմական պարտականություններին, որոնք իրականացվում են նման զինվորական պետերի միջոցով:

Մենք հույս ունենք, որ դուք ըմբռնում եք իրավիճակը, ուստի և համոզված ենք, որ ընտրության օրերին Հայաստանում և Արցախում չի հնչի և ոչ մի կրակոց, որ նոր ուժերը կկարողանան ժողովրդավարական, ոչ բռնի եղանակով ապահովել հայ ժողովրդի ապագա կամքի արտահայտման իրական հնարավորությունը: Մենք պետք է հիշենք. նույնիսկ մեկ կրակոցը կարող է տեղից շարժված հեղեղատի պես խորտակել ժողովուրդների խաղաղ կյանքի հույսը, մեր մերձավորների երջանկությունը, ձեր և մեր ազատությունը:

ՕԼԵԳ ՄԱՏՎԵԵՎ

(«Պերեստրոյկա», հունիս-օգոստոս, 1990 թ.)